յում էի նրանց ծամերին, որ երկայն, հաստ հիւսերով թափոել էին թիկունքի վրայ, գլխներին դրած արախչիների տակից: Բայց այժմ այնքան մութն էր, որ ստուգել չկարողացայ, արդեօք դեռեւս կայի՞ն նրանց սեւ գիսակների մէջ ճերմակ մազեր: Արախչիների վրայ այնքան խիտ եւ միմեանց մօտ դրամներ էին կարած, որ արծաթեայ թասի ձեւ էին ստացել:

Ասլանը ցոյց տոեց եւ Շամիրամայ հռչակաւոր գետը, որի ամրակառոյց եւ վիթխարի ամբարտակների մասին խօսում է Խորենացին: Թէ հին ժամանակներում ինչպէ՞ս էր կոչւում, ես չգիտեմ, իսկ այժմ Սար-բուլախ (աղբիւրի ակն կամ գլուխ) կոչոած մեծ լեռան ստորոտի ժայռերը մինչեւ տասն տեղ պատառելով, այնտեղից դուրս բերեց մեծագոյն թագուհին լեռան սրտումը ամբարոած ջուրը եւ, արհեստական առոակով, որի երկարութիւնը մինչեւ տասնեւհինգ մղոն տարածութիւն ունի: Հայոց-ձորի միջով բերեց գետը եւ հասցրեց մինչեւ Արտամեդ: Այստեղ ճիւղաւորւում է նա եւ ոռոգում է Արտամեդի լայնատարած այգիներն ու անդաստանները եւ, դարձեալ միանալով, ամրակուռ քարակերտ ամբարտակների վրայով, ահագին գոռում-գոչումով անցնում է եւ գնում է դէպի Վան քաղաքը՝ ոռոգելու Այգեստանի այգիները:

Արտաշէս Բ-ից քսանեւերկու դար առաջ Արտամեդը եղել է Շամիրամի զբօսավայրը: Արայի հետ ունեցած սիրային անյաջող կռոից յետոյ հեշտասէր թագուհին, այստեղ, Արտամեդի հովանոցներում ու բուրաստաններում, հայոց իշխանազուն երիտասարդների հետ էր լրացնում այն սէրը, որ նա սպասում էր Արայից: Նա հրապուրում էր երիտասարդներին այն հուլունքներով, որոնց շարքը, իբրեւ մանեակ, կրում էր պարանոցին, եւ որոնք ունէին կախարդական զօրութիւն: Հայոց ծերունի նահապետներից մէկը մտածեց ազատել թեթեւամիտ երիտասարդներին թագուհու մոլորութիւններից եւ, միեւնոյն ժամանակ, թագուհուն զինաթափ անել երիտասարդներին դիւթելու հնարքներից: Մի անգամ թագուհին լողանում էր իր բուրաստանի մարմարոնեայ աւազանում, եւ մարգարտացող ջուրը բարձր շատրոաններից ցօղում էր նրա ախտաբորբոք մարմինը: Նրա հագուստը, նրա զարդարանքները, որոնց թւում եւ կախարդական հուլունքները՝ դրած էին աւազանի մօտ, վարդենիների հովանիի տակ, կանաչ խոտերի վրայ: Թագուհին, գիսակների երկար հիւսերը արձակած, սանրւում էր: Այդ միջոցին գաղտագողի կերպով մօտեցաւ ծերունի նահապետը եւ, իմանալով, որ թագուհու հրապուրանքների բոլոր գաղտնիքը հուլունքների մէջն է, խլեց մանեակը, սկսեց փախչել դէպի ծովը: Զայրացած թագուհին, այնպէս հերարձակ, վազեց ծերունու ետեւից: Երբ չկարողացաւ հասնել, իր անհնարին կատաղութեան